

**«Ներքին հիվանդություններ» (Ֆթիզիատրիա) մասնագիտությամբ
հետազոտողի որակավորման քննությունների
ՀԱՐՑԱՇԱՐ**

1. Տուբերկուլոզի համաճարակաբանական իրավիճակն արդի պայմաններում:
2. Տուբերկուլոզի համաճարակաբանական իրավիճակը բնութագրող հիմնական ցուցանիշները:
3. Տուբերկուլոզի հարուցչի տեսակները, նրանց վիրուլենտությունը:
4. Տուբերկուլոզի հիվանդի հետազոտությունը:
5. Տուբերկուլոզի կլինիկական ախտորոշումը:
6. Տուբերկուլոզի ախտանիշները /ընդհանուր/:
7. Տուբերկուլոզի ախտանիշները /կրծքային/:
8. Տուբերկուլոզի ախտածագումը և ախտաբանական անատոմիան:
9. Տուբերկուլոզի ժամանակ դիտվող կազմաբանական տեղաշարժերը:
10. Տուբերկուլոզի հարուցչի՝ օրգանիզմ ներթափանցման ուղիները:
11. Արտածին և ներածին վարակի դերը տուբերկուլոզի առաջացման գործում:
12. Անընկալությունը և գերզգայնությունը տուբերկուլոզի ժամանակ:
13. Տուբերկուլինային ախտորոշում: Տուբերկուլինի տեսակները, կիրառումը:
14. Մանթոյի փորձը, կատարման տեխնիկան, արդյունքների գնահատումը:
15. Տուբերկուլինային փորձերի հակացուցումները:
16. Կոխի փորձի կատարման տեխնիկան և ցուցումները:
17. Կոխի ենթամաշկային տուբերկուլինային փորձի արդյունքները:
18. Կոխի ենթամաշկային տուբերկուլինային փորձի ընդհանուր պատասխանը:
19. Կոխի ենթամաշկային տուբերկուլինային փորձի օջախային և տեղային պատասխանը:
20. Հակատուբերկուլոզային պատվաստում, ցուցումները, հակացուցումները և կատարման տեխնիկան:
21. ԲՑԺ պատվաստանյութի տեսակները, հետպատվաստային բնականոն ընթացքը:
22. Հակատուբերկուլոզային պատվաստման բարդությունները, դրանց դասակարգումը:
23. Առաջնային տուբերկուլոզի հիմնական բնութագրական գծերը , ախտածագումը:
24. Տուբերկուլոզային թունավորման կլինիկական և բուժումը:
25. Տուբերկուլոզային թունավորման տարբերակիչ ախտորոշումը:
26. Ներկրծքային ավշահանգույցների տուբերկուլոզի դասակարգումը, բարդությունները և բուժումը:

27. Ներկրծքային ավշահանգույցների տուբերկուլոզի տարբերակումը լիմֆոգրանուլեմատոզից:
28. Ներկրծքային ավշահանգույցների տուբերկուլոզի տարբերակումը սարկոիդոզից:
29. Ներկրծքային ավշահանգույցների տուբերկուլոզի տարբերակումը լիմֆոսարկունայից:
30. Ներկրծքային ավշահանգույցների տուբերկուլոզի տարբերակումը սիլիկոտուբերկուլոզային բրոնխադենիտից:
- 31.Տուբերկուլոզային առաջնային համալիր, կլինիկան և բուժումը:
32. Տուբերկուլոզային առաջնային համալիրի տարբերակիչ ախտորոշումը թոքաբորբերից:
33. Առաջնային տուբերկուլոզի տեղակայված ձևերի բարդությունները:
34. Երկրորդային տուբերկուլոզի ախտածնությունը, ընթացքի առանձնահատկությունները, ելքը:
35. Թոքերի օջախային տուբերկուլոզ.կլինիկան, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը:
36. Թոքերի ներսփռանքային տուբերկուլոզ. կլինիկառենտոգենաքանակական տեսակները, կլինիկան, բուժումը:
37. Թոքերի ներսփռանքային տուբերկուլոզի տարբերակումը թոքաբորբից:
38. Թոքերի ներսփռանքային տուբերկուլոզի տարբերակումը ծայրամասային և կենտրոնական քաղցկեղից:
39. Թոքերի ներսփռանքային տուբերկուլոզի տարբերակումը թոքի ինֆարկտից:
40. Թոքերի ներսփռանքային տուբերկուլոզի տարբերակումը թոքի էոզիոֆիլային ներսփռանքից:
- 41.Լոռանման թոքաբորբի ախտածագումը, կլինիկան, ախտորոշումը և բուժման առանձնահատկությունները:
42. Տուբերկուլոմայի ախտածագումը, կլինիկան, ախտորոշումը և բուժման առանձնահատկությունները:
43. Տուբերկուլոմայի տարբերակումը թարախակույտից:
44. Տուբերկուլոմայի տարբերակումը բարորակ նորագոյացություններից:
45. Տուբերկուլոմայի տարբերակումը թոքաբշտերից:
46. Տուբերկուլոմայի տարբերակումը ծայրամասային քաղցկեղից:
47. Թոքերի սերմնացրված տուբերկուլոզի ախտածագումը, ախտանատոմիան:
48. Թոքերի սերմնացրված տուբերկուլոզի դասակարգումը:
49. Սուր կորեկանման (միլիար) սերմնացրված տուբերկուլոզի ախտածագումը, ախտանատոմիան, կլինիկան և ելքը:

50. Ենթասուր սերմնացրված տուբերկուլոզի կլինիկան, բուժումը:
51. Քրոնիկական սերմնացրված տուբերկուլոզի կլինիկան և ելքը:
52. Թոքերի սերմնացրված տուբերկուլոզի տարբերակումը սարկոիդոզից:
53. Թոքերի սերմնացրված տուբերկուլոզի տարբերակումը փոշեգարությունից:
54. Թոքերի սերմնացրված տուբերկուլոզի տարբերակումը թոքերում չարորակ ուռուցքների մետաստազներից /կարցինոմատոզ/:
55. Թոքերի սերմնացրված տուբերկուլոզի տարբերակումը երկկողմանի թոքաբորբից:
56. Թոքերի սերմնացրված տուբերկուլոզի տարբերակումը իդիոպատիկ ֆիբրոզացնող ավելուլիտից:
57. Թոքերի սերմնացրված տուբերկուլոզի տարբերակումը հիստիոտոզ X-ից:
58. Թոքերի սերմնացրված տուբերկուլոզի տարբերակումը հեմոսիդերոզից:
59. Սրընթաց տուբերկուլոզի տեսակները, զարգացման մեխանիզմը, կազմաբանական առանձնահատկությունները:
60. Տուբերկուլոզի քայքայիչ ձևերը, զարգացման նախապայմանները, կազմաբանությունը:
61. Թոքերի խոռոչային տուբերկուլոզ. կլինիկան, ելքը, բուժումը:
62. Թոքերի խոռոչային տուբերկուլոզի տարբերակումը թարախակույտից և միայնակ օդաբշտից:
63. Թոքերի խոռոչային տուբերկուլոզի տարբերակումը քաղցկեղի քայքայվող ձևից:
64. Թոքերի թելքախոռոչային տուբերկուլոզ, ձևավորման նախապայմանները, կլինիկան, տարբերակիչ ախտորոշումը և բարդությունները:
65. Թոքերի ցիռոզային տուբերկուլոզ:
66. Տուբերկուլոզային մենինգիտի կլինիկան, բուժումը և ելքը: Ողնուղեղային հեղուկի բնութագիրը տուբերկուլոզային մենինգիտի ժամանակ:
67. Տուբերկուլոզային մենինգիտի տարբերակիչ ախտորոշումը:
68. Տուբերկուլոզի բարդությունները:
69. Ինքնաբուխ պնևմոթորաքս. կլինիկան, ախտորոշումը:
70. Ինքնաբուխ պնևմոթորաքսի բուժումը:
71. Արյունախխումներ և թոքային արյունահոսություններ տուբերկուլոզի ժամանակ:
72. Թոքային արյունահոսությունների բուժումը տուբերկուլոզի ժամանակ:
73. Տուբերկուլոզային պլերիտ. դասակարգումը, ախտածագումը, կլինիկան, ախտորոշումը և բուժումը:
74. Տուբերկուլոզային պլերիտի տարբերակիչ ախտորոշումը:

75. Տուբերկուլոզային պոլիսերոզիտ, զարգացման մեխանիզմը, ախտորոշումը:
76. Ծայրամասային ավշահանգույցների տուբերկուլոզ, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
77. Տուբերկուլոզային մեզադենիտ, կլինիկան, ախտորոշումը, բուժումը:
78. Հենաշարժական համակարգի տուբերկուլոզ: Տուբերկուլոզային սպոնդիլիտ. ախտորոշումը, բուժումը:
79. Շնչափողի, վերին շնչուղիների և բրոնխների տուբերկուլոզ:
80. Երիկամների տուբերկուլոզի ախտածագումը, դասակարգումը, ախտորոշման եղանակները:
- 81.Թոքերի տուբերկուլոզի ակտիվության կլինիկական-լաբորատոր դրսևորումները (լտրիսի, արյան, մեզի, բրոնխային ջրերի քննությունը):
82. Թոքերի տուբերկուլոզի ախտորոշման մանրէաբանական եղանակները:
83. Տուբերկուլոզի հարուցչի դեղորայքակայուն տեսակներով հիվանդի հետազոտման մանրէաբանական եղանակները:
84. Հակատուբերկուլոզային բուժման DOTS ծրագիրը: Տուբերկուլոզի ժամանակ կիրառվող հակամանրէային դեղամիջոցները և նրանց հարուցած կողմնակի երևույթները:
85. Հակատուբերկուլոզային դեղամիջոցների դասակարգումը /I,II,III սերնդի հակատուբերկուլոզային դեղամիջոցներ/, դրանց կողմնակի ազդեցությունները:
86. Տուբերկուլոզի ախտածնական և ախտանշական բուժումը: Տուբերկուլոզի ֆիզիոթերապևտիկ բուժումը:
87. Կոլապսաթերապիա. ցուցումները, հակացուցումները:
88. Տուբերկուլոզով հիվանդների վիրահատական բուժումը. ցուցումներն ու հակացուցումները:
89. Տուբերկուլոզի հարուցչի դեղորայքակայուն տեսակները, դրանց ձևավորմանը նպաստող պայմանները:
90. Տուբերկուլոզի հարուցչի դեղակայունությունը, դասակարգումը, բուժումը:
- 91.Հակատուբերկուլոզային ծառայության կազմակերպումը:
92. Տուբերկուլոզի քիմիականխարգելումը:
93. Տուբերկուլոզային վարակի վերահսկումը:
94. Շնչառական օրգանների տուբերկուլոզը^a համակցված պրոֆեսիոնալ հիվանդությունների հետ (սիլիկոտուբերկուլոզ, պնևմոկոնիոզ և այլն):
95. Տուբերկուլոզը և շաքարախտը:
96. Տուբերկուլոզը և թոքերի նորագոյացությունները:

97. Տուբերկուլոզը և ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ը:
98. Տուբերկուլոզը և հոգեկան հիվանդությունները:
99. Տուբերկուլոզը և հարբեցողությունը:
100. Տուբերկուլոզը և մայրությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սաֆարյան Մ. Դ. և համահեղ., Ֆթիզիատրիա /Դասագիրք/- Երևան, 2002, 192 էջ
2. Սաֆարյան Մ.Դ., Նիկոլայան Լ.Թ., Գևորգյան Ա.Պ. ”Ֆթիզիատրիայի հիմունքները”, ուսումնական ձեռնարկ, Երևան- 2010թ., 140 էջ
3. Սաֆարյան Մ.Դ., Գևորգյան Ա.Պ., Մինասյան Գ.Ռ. ”Ֆթիզիատրիայի մասնավոր հարցեր” ուսումնական ձեռնարկ, Երևան-2015թ., 185 էջ
4. Дэвидсон. Внутренние болезни. Пульмонология. Редакторы: Николас А.Бун, Ники Р.Колледж, Брайан Р. Уолкер, Джон А.А. Хантер. Перевод с англ. под редакцией проф. С.И.Овчаренко. М.: Издательская группа “ ГЭОТАР-Медиа”, 2009 – 138 с.
5. Кошечкин В.А., Иванова З.А. Туберкулез. Учебное пособие. М.: Издательская группа “ГЭОТАР-Медиа”, 2007 - 304 с.
6. Крофтон Дж., Хорн Н., Миллер Ф. Клиника туберкулеза. Перевод с англ. М.Медицина, 2001г.- 186с
7. Полли Э. Парсонз, Джон Э. Хеффкер. Секреты пульмоннологии. Перевод с англ. под редакцией к.м.н. О.Ф. Колодкиной, Москва “ Медпресс-информ”. 2004 - 647с.
8. Рабухин А.Е. Туберкулез органов дыхания у взрослых.- М.Медицина,1963 -342 с.
9. Туберкулез органов дыхания. Под ред. чл.- корр. АМН СССР Хоменко А.Г.- М.Медицина,1963 - 1988.-576 с.